



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

“ 22 ” 07 2019 թ.

N 07-Ջ

ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 1064-Ն
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «2019 թվականի փոստային վճարման պետական նշանների թեման, գործողության մեջ դնելու ժամկետը, անվանագինը և տպաքանակը հաստատելու մասին» N 1064-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) հրամանով հաստատված հավելվածի «3.1», «4.5» և «8.1» կետերը ուժը կորցրած ճանաչել.
- 2) հավելվածի 3.2-րդ կետի 6-րդ սյունակի «12 000» թիվը փոխարինել «15 000» թվով.
- 3) հավելվածի 6.1-րդ, 7.1-րդ կետերի 4-րդ սյունակի «II եռամսյակ» բառերը փոխարինել «IV եռամսյակ» բառերով և 8.3-րդ կետերի 4-րդ սյունակի «III եռամսյակ» բառերը փոխարինել «IV եռամսյակ» բառերով:

- 2. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝
 - 1) Սպորտ. Համահայկական յոթերորդ խաղեր թեմային նվիրված «7-րդ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ. 7^{ՐԴ} PAN-ARMENIAN GAMES. 7^{ՐԴ} ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ. PAN-ARMENIA GAMES» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 1 հավելվածի:
 - 2) Մեծանուն հայեր. Վահան Թոթովենցի ծննդյան 125-ամյակը թեմային նվիրված «1894-1938 ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ. VAHAN TOTOVENTS» 1 նամականիշով բացիկի, համաձայն N 2 հավելվածի:

2. Գործողության մեջ դնել՝

1) Սպորտ. Համահայկական յոթերորդ խաղեր թեմային նվիրված <<7-րդ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ. 7TH PAN-ARMENIAN GAMES. 7TH ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ. PAN-ARMENIA GAMES>> 1 նամականիշով գեղաթերթիկը, սահմանելով անվանագինը՝ 870 դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ:

2) Մեծանուն հայեր. Վահան Թոթովենցի ծննդյան 125-ամյակը թեմային նվիրված <<1894-1938 ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ. VAHAN TOTOVENTS>> 1 նամականիշով բացիկը, սահմանելով անվանագինը՝ 240 դրամ, տպաքանակը՝ 500 հատ:

ՆԱԽԱՐԱՐ

“ 22 ” 07 2019թ
ք. Երևան

Հ.ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2019թ հուլիսի 22 թիվ 08-Զ հրամանի



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հավելված 2

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի

2019թ հուլիսի 22-ի թիվ 07-Ձ հրամանի

ՈՒՍԻՑ / FROM _____



125TH

ամյակ anniversary

1894 - 1938

ՎԱՀԱՆ
ԹՈԹՈՎԵՆՑ
VAHAN
TOTOVENTS

ՈՒՄ / TO _____

ՀԱՅՓՈՍ
HAYPOST


Հայիոստ ՓԲԸ, 2019, տպագրումներ 500
Haypost CJSC, 2019, print-run 500

№ 000

Դիմերես

ՀԱՅՓՈՍ
HAYPOST

Մկարագարդում «Ելանդը հին հռոմեական ճանապարհի վրա» գրքից
Illustration from "Life on the Ancient Roman Road" book



Դարձերես